


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ն. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՎԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Ե ԳՈՐԹՈՒՆ
 ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԵՒ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ Բազորի
 ԳԱՀԻՐԷ (Հապոլպոլի)



Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱՄՐԸ
 Տարեկան, ողջ դահլիճ. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏՈՐ ԱՐԿԻՆԵՐ
 Տարեկան Յրակի 20
 Վեցամսեայ » 12
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ ԿԱՆԻԿ Ե
 ԵՒ ԹՂՔԱՏԱԿ ԾԱԽԲԸ
 Խմբագրութեանս վրայ:
 Խմբագրութեանս ուղղուած
 գրութիւնի և չ'են տրուիր:

**ՕԳՆՈՒԹԻՒՆ
 ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ**

Ի նպատակ շնորհակալութեամբ ի բազմաթիւ պարտքերէն զերթնալ ի իր իրաւունքներէն 42 հարիւր թուանգամ ի լայնքը 42 հարիւր թուանգամ ի թերթը պիտի բազմանայ 40 էջերէ, ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած: Թուողքը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր Պիտի պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ:

Բազմաթիւ այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը պիտի հրատարակուի իբրև անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration arménienne. նման եւրոպական մեծ ազգայնաբանական պատկերազարդ թերթերու:

Պիտի տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ սրբանոցներուն:

Գինն է ԿԱՆՆԻԿ 2, 50 ֆր. 1 րր. 50 սէնթ.
 Այս ծանուցաբով կը հրաւիրուին մերագնեայ այն ամէն ազնիւ ու զիժած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պարկին համեատ լուծայ մը բարեհաճին ձգել հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նըպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի հաւաքուած գումարը եւ սրջափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, իտի տպուին Բազմաթիւ պարկին մէջ:

Այս բացառիկ թերթին մէջ պիտի տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանդիմ: փափաքողք թող փութան յղել իրենց ծանուցումները:

Բազմաթիւ ի հասցէն է.
 Rédaction de la Revue PAZMAVEB
 (St. Lazare) VENISE, Italie.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդկային ընկերութեան մէջ իւրաքանչիւր անհատ, այդ կամ կին, մեծ կամ փոքր ունի իւր գիրքն՝ իւր պաշտօնն եւ իւր կրօնն, եւ մարդ իբր ընկերական էակ կամ գործիչ իւր գիրքին՝ իւր պաշտօնին եւ կրօնին պահանջները ի կիր առնելով ուրիշ բան ըրած չ'իներ՝ այլ միայն կատարած իւր պարտականութիւններն եւ հընազանդած իւր խղճին օրինաց:

Աշխարհի մէջ կան Վերիւ մեծ եւ նուիրական կազմակերպութիւններ, երկուքն ալ հիմնուած մարդոյ բարոյական եւ ընկերական ընտելեան վրայ, երկուքն ալ կը պահանջեն մասնաւոր պարտականութիւններ եւ յատկապէս իւր իրաւունքներէն:

Իւրաքանչիւր ընկերութիւն մ'է եւ կրնանք յարմարաբար ըսել թէ մանրանկար հայրենիք մ'է, կամ ուրիշ խօսքով ընտանիքն հիմն է հայրենիքին:

Ընտանիքն փոքրիկ ընկերութիւն մ'է եւ կրնանք յարմարաբար ըսել թէ մանրանկար հայրենիք մ'է, կամ ուրիշ խօսքով ընտանիքն հիմն է հայրենիքին:

Թէ՛ քաղաքակիրթ եւ թէ՛ վայրենի ազգաց պատմութիւնը կը վիային թէ ընտանեկան օրէնքներն եւ պարտականութիւններն ազգերու ծագման հետ, եղած են ընկերական հաստատութիւն մը տարբեր կերպերով եւ տարբեր ըմբռնումներով, տարբեր ազգերու կամ ցեղերու մէջ: Ու եւ է ազգի մը քաղաքակիրթութեան եւ մտային զարգացման բարձրագոյն աստիճանն մէկ ուրիշ երեւոյթն է ընտանեկան օրինաց վրայ իրենց ունեցած բարձր եւ սուրբ հայեացքը:

Ընտանեկան այս խորհրդաւոր հաստատութիւնը կենդանական աշխարհի մէջ մարդուն միայն յատուկ է իւր նախնական նպատակն է իւր նմանաց արտագրութիւնը: «Աճեցէք եւ բազմացէք եւ լցէք զերկիր»: Այս էր նախամարդուն կամ գրախտի ընտանիքին հարստանաց միութեան վրայ արտատնուած Աստուածային օրհնութիւնը. եւ այսպէս պէտք է լինի ազգերու բարգաւաճման ու յարատեւութեան համար:

Ընտանիքն՝ իբրև փոքրիկ ընկերութիւն մը՝ ինչպէս անի իւր որոշ օրէնքներն, իւր սեփական իրաւունքներն, իւր մասնաւոր աւանձնաշնորհումներն, շահերն ու պարտականութիւններն՝ նոյնպէս ալ ընտանեկան խաղաղութեան եւ երջանկութեան համար հոն պէտք է արեւ եւ հաւասարութիւն. ապա թէ ոչ ընտանեկան խաղաղութեան եւ երջանկութեան հիմն կը խախտի եւ կը կործանի:

Հոն՝ ուր կը արեւ մարդասիրութեան արդարատիրութեան սկզբունքները, հոն՝ ուր կը նախագահէ սիրոյ եւ պարտաճանաչութեան ողին, ուր սիրան ու մխտն կը դարձնեն ներդաշնակ իմաստութեանը եւ ուր կենսիկ համեստ է եւ ազնիւ, հոն միայն կը գտնենք խաղաղ եւ երջանիկ ընտանիք մը, որք եւ անարատ կենսիք մը՝ իր լուրջ ներքին եւ արտաքին ընկերական յարաբերութիւնաց մէջ:

Ընտանեկան եւ ընկերային յարաբերու-

թեանց մէջ սիրոյ, յարգանաց, քաղաքավարութեան, պատուոյ եւ հաւատարմութեան թերութիւնը ցոյց կուտան բարոյական արկարութիւն եւ օրինաց զեղծում:

Ընտանեկան եւ ընկերական կենաց հիմն է սէրը ուր որ սէր չ'կայ, հոն չ'կայ նաեւ դառափարի ներդաշնակութիւն եւ համերայն գործունէութիւն, հոն կենսիք կը կորսնցունէ իւր քաղցրութիւնը եւ օգտակարութիւնը: Եթէ կըսէ Պօլսո «Վարդոց եւ հըրեշտակներու ընկերները խօսի՛մ ու սէր չունենամ», ես ձայն տուող պիտի չ'ընեմ եղայ կամ հնչեցող ծննդայի մը պէս»: Եթէ մարդարեւ զեթիւն ունենամ՝ ու հասկնամ ամեն խղճաւորները եւ ամեն դիտութիւնը եւ թէ սր ունենամ՝ ամեն հաւատք միտք իսկ լեռները անդախտելու ու սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ թէ սր իմ բոլոր ընտացուածքս աղքատներուն ու մարմինս այրելու տամ, ու սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար: Ահաք երկայնամիտ է, քաղցր է, սէրը չ'ապահովիր, սէրը չ'զգոտողանալ, չ'հարգարտանալ, չ'մեղալել վաճառք չունենար, իրենք չ'իմանէր, բարկութեան չ'զգոտուիր, շարութիւն չ'խորհիր, անիրաւութեան վրայ չ'ընդար» (Ա. Կոր. ԺԳ.):

Սիրոյ օրինաց կը պարտին մարդիկ իրենց ընտանեկան եւ ընկերական հարաբերութեանը:

ՅՐ. ՅԱՆՈՐԷԱՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Առեւտրի 11 նոյ միւլտ 4468 թուոյն մէջ կը կայրուի:

Եղիպտոսի Հայոց առաջնորդական ընտրութեան մաս ժամանակի մէջ կատարուելու մասին Գահիրէն եւ Ազգայնապաշտպան հասցած լուրերը կը հակասեն գերաբ, ինչ որ արդիւնք է ո'չ թէ թղթակիցներու լատանդակի չ'ըլլալուն՝ այլ այդ երկու քաղաքներու ազգայններուն կամ աւելի ճշգրէ Վախի իշխան, ժողովին ու Ազգայնագրից թաղ. խորհրդին միջեւ կարծիքներու եւ տեսութեանց անհամաձայնութեան:

Ահա տակի թէ ինչ կը գրէ մեզ Ազգայնագրից մեր թղթակիցը նոյ 3 թուականով կ'ըսէ Արեւելի.

«Եղիպտոսի Առաջնորդական ընտրութեան մասին Պատ. լրագրոյց Գահիրէն ստացած լուրերուն մէջ անձեղութիւններ կան (1):»

(1) Մենք ալ կաւելցինք թէ այդ անձեղութիւնները կենայտն ալ չ'ան մի պատճառներ կան... Արեւելցին Գահիրէն թղթակիցը իրեն համար տեսակ մը խեղճութիւնը կը համարի կերպարանապիտեակ լուրերը օտայ քաղաքի մը թերթին

«Եզրիտոսի Գա.առ. ժողովը նոր Առաջնորդի ընտրութիւն կատարելու որոշում չէ՛ տուած մինչեւ ցարգ. տրուած որոշումը Տեղապահի ընտրութիւն կատարելու համար է, ո՛չ թէ Առաջնորդի Ազգ. քանակը թաղ. խորհուրդն ալ արդէն այս մտօք համաձայնութիւն գոյացուցած է Գա.առ. ժողովին հետ :

Արեւելի յիշատակած ընտրելիները տեղապահական ընտրելիներ են եւ ոչ առաջնորդական : Տարբեր խնդիր է, եթէ Գա.առ. ժողովը յառաջիկային մէջ իր որոշումը փոխէ : Բայց սա հաստատապէս պիտենք թէ Գահիրէի ազգային պաշտօնական մարմինները մինչեւ ցարգ Տեղապահի ընտրութեան կողմնակի վրայ ջանացած են Ազգ. քանակը թաղ. խորհուրդին հետ համաձայնել :

«Աւրիշ կարեւոր կէտ մըն ալ սա է որ Թաղ. խորհուրդին մասնակցութեան իրաւունքը՝ Առաջնորդի կամ Տեղապահի ամսականին կէտը վճարելէն յառաջ չի գար, ինչպէս կը գրուէր Ձեզ Գահիրէէն, այլ այն հանդամանքէն՝ որ Ազգ. քանակը թաղ. խորհուրդին հայ գաղութին կարեւոր մէկ հատուածը կը ներկայացնէ :

«Եթէ ինչպէս օրէնքը կը տրամադրէ, Գա.առ. ժողովին մէջ Ազգ. քանակը թաղ. խորհուրդի ունեցած ըլլալը՝ տեղի չպիտի մնար Թաղ. խորհուրդի միջամտութեան, բայց ինչպէս ուրիշ օրինակներում մտադրութիւններ այնպէս ալ այս կարեւոր քառաձայնութիւնը մինչեւ ցարգ զանց առնուած ըլլալով Եզրիտոսի հայ գաղութին մէջ, Թաղ. խորհուրդը պարտաւորուած է Առաջնորդի կամ Տեղապահի ընտրութեան միջոցին ձայն ունենալ իրրեւ պաշտօնական ներկայացուցիչ Ազգ. քանակը թաղ. խորհուրդին հայտնել :

— Մեզի լուր կը արուի թէ՛ Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին 1898 տարուայ հաշիւները քննելու համար ներկայէս եօթ ութ ամիսներ առաջ մասնախումբ մը կազմուած է, սակայն այդ մասնախումբը մինչեւ ցարգ աւարտած չէ եղեր իրեն յանձնուած պաշտօնն : Կարեւորութենէ զուրկ եւ հարեւանցի ակնարկով մը այսպիսի ամենակարեւոր խնդրոյ մը վրայէն անցնելու կատարելապէս խզի օրինաց հակառակ պիտի ըլլար, ուստի կ'ստիպուինք մտածելու երկու նշանակելի պարագաներու վրայ :

Կ'ամ մասնախումբի պատ. անդամներն ի վաղուց անտի Եզրիտոս հաստատուած ըլլալով եզրիտոսի սա նշանաւոր առածը — Եզրիտոսի աւազակի — (2) նշանաբան ընտրած են, կ'ամ իրենց յանձնուած պաշտօնին ձեռնհասութիւնը չունին :

Վերջինք այնչափ հաւանական չենք գտնել, իսկ եթէ առաջին պարագան է յապաղման պատճառով մասնախումբի պատ. անդամոց կը մնայ հանրային կարծիքին եւ գալթակողեալ մտաց պէտք եղած գոհացումը ալ :

— Երբեմն Փարոս լրագրի մէջ խնդրոյ նիւթ եղած Արաբիայի ազգային մասկանց դաստիարակութեան նպատակը նպատակաւ հաստատուած գանձանակին պատրաստ գրամներուն « որո՞ւ պիտի յանձնուի եւ որ հաստատութեան պիտի յատկացուի » խնդիր կայ հրապարակին վրայ :

Այս մասին մեզի հարցողուած լուրերը, եթէ ստոյգ են, Ամենապատիւ Իզմիրեանի Առաջնորդութեան օրով, Արաբիայի առաջնորդարանին կողմէ Տեղապ. Առաջել Պէրպէրեան, Ս. Հաճախեան, Ս. Երաման եւ Ն. Աղազարմեան փոխանորդ կարգուած են, վերջ մը զնելու համար այս պատրաստ պուրակին շուրջ պատրաստ գրոյցներուն, սակայն հակառակ Ա. էֆ. Պէրպէրեանի անուրանալի ջանասիրութեան, եզրակացութեան մը յանգած չէ :

զրկելու, իրաւացի քննադատութեանց հանդիպելու երկու զէն բռնուած :

Եթէ Արեւելի Ազգ. քանակը թաղ. կողմը աւելի չըջանայեց չ'գտնուէր եւ վրայ չ'համէր, մենք վստահ ենք թէ Գահիրէի քանակը թաղ. մը «Արեւելի» թիւ մը եւս պիտի աւելցնէր իրեն հաւաքածոյին վրայ եւ օր մը առտնք իր անվիճելի ճշմարտութիւններ քանի մը միամիտներու ցոյց պիտի տար :

Մեր այժմէն եւ ուշադրութենէն վրիպած չէ Արեւելի Գահիրէի թաղ. կողմին նմանօրինակ ընթացքներն, սակայն անոնց մասին պէտք եղածներն ըսելու համար յարմար ժամանակին պիտի սպասենք :

(2) Եզրիտոսի աւազակի արարեքն է եւ բաական թարգմանութեամբ կը նշանակէ, գուն պիս վերցուր եւ ալ քեզ վերցնեմ, Հայերէնի մէջ զիրար պաշտպանելով կը բացատրուի այս առակը,

այս խնդիրը, հիմակ քանի որ այժմէն թիւն ստացած է սա, մենք կը հաւատանք թէ Ա. էֆ. պէրպէրեան իր միւս ընկերները հաւաքելով այդ անհեղ զրակին հանգստավայր մը պիտի սրոյն :

— Օրինակելի գաս մը Գահիրէի պակասեալ երեսփոխաններն ընտրելու պաշտօն ունեցող ընտրողական ժողովին եւ վարչութեան :

Վասնի Շարժում թերթին մէջ կը կարգանք Տէր Մարտիրոս քահանայ Մարտիրոսեանի հետեւեալ ազգարարութիւնը :

«Պատիւ ունիմ ծանուցանել տեղւոյս մէջ ընտրութիւն հաստատող մեր յարգոյ գաղթական ազգայնոց, որ իրենք եւս այսուհետեւ տեղացի ազգայնոց նման իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու, ուստի կը հրաւիրեմ որ բարեհաճին գալ եւ իրենց անունները արձանագրել ալ ընտրողական ցանկին մէջ եւսայն» :

Շարժումի այս յայտարարութեան կ'երեւի թէ Վասնի մէջ ալ գաղթականի ու տեղացի խտրութիւն կայ, եղեր եւ տեղւոյ վարչութիւնը յարմար գտած է այդ կողմնակողմը մէջտեղէն վերցընել, սարսուղ եզրիտոսներուն . . . :

— Վասպուրականցոց Որբախումբ ընկերութեան Պատ. Գործ. ժողովոյ Ատենապետ Գ. Բազարեան եւ Գանձապետ Պ. Առաքելեան իրենց մեղմէ յանուն Վասպուրականի հրապարակաւ իրենց շէր-հակալիքը յայտնել որոյն Արաբիայի բարեպաշտ տիկնոջ որ որբախումբ ընկերութեան 50 դուրսի նուէր մը ըրած է «Արշալոյս» ի միջոցաւ :

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԱԶԻ

Որբասիրաց ընկերութեան հրատարակաւ առժամեայ Գործ. ժողովը կը փութայ ծանուցանել արգոյ անդամոց թէ, իր գործառնութեանց սեղեկագիրը, անցեալ նոյամիս 8 ին, իր հրատարականով մէկտեղ ներկայացուց առժամեայ Մայր Գիւնի Տ. Ատենապետին, Ատենապետը արգէն հրատարած լինելու պատճառաւ :

Գործողարար՝ Տիար Ատենապետը, Պ. Գ. Միրիճեանեան, անորակելի ձգձգումներով, յուպաղեցուց Ընդհ. ժողովոյ ստիպողական դումարումը, ու այսօր անտեղի եւ անտանելի պատճառաբանութիւններով աւելի եւս յետաձգելու վճարուցուցիչ առիթներուն դիմել կը թուի :

Իր գրաւոր եւ պաշտօնական պահանջներուն համակերպելու անկարելիութեան հանդէպ, ցաւ ի սիրտ հարկադրուած ենք՝ մեր նախաձեռնութեամբ ի նիստ հրաւիրել մեր արգոյ ընկերները, առաջիկայ կիրակի օր, առկալ մնացած շատ կարեւոր խնդիրներ լուծելու եւ նոր ընտրութիւններ կատարելու համար :

«Արշալոյս» ի առաջիկայ թուով պիտի ծանուցանենք ժողովանդին եւ ժամը :

Հրատարակաւ առժ. Գործ. ժողովոյ Ատենապետ Ս. ՕՏԱՊԱՆԵԱՆ

Պատուարժան Խմբագրութիւն «Արշալոյս» Աստ Տէր,

Գործ. ժողովս իր ոչ օրուան ժ. նիստին մէջ, ընկերութեան հաւաքիչ կարգից զՏիար Խաչիկ Ալթունեան : Հիւսուարար Լսարան-ընթերցատան Պատ. անդամակիցներէն կը խնդրուի որ այսուհետեւ յիշեալ անձին յանձնեն իրենց վճարումները, ընկալագիր ստանալով :

Ինչը ըսելով, Պատ. Խմբագրութիւն, յայտարարութեան հրատարակումը Ձեր թերթին մէջ :

Միւսմբ. յարգանք ի դիմաց Գործող ժողովոյ Լսարան-ընթերցատան ընկերութեան Ատենապետ Ս. ԱՅԱՏԵԱՆ Ս. ԲԻՒՐԱՏ

ՆԱՐՍԱՆԻՔ

Կիրակի օր տեղի ունեցաւ Կ. էֆէնտի Մաթոսեանի ընտրութիւն մէջ Մաթոսեան հանրաժանութեան Գահիրէի Տնօրէն Տիար Բիւզանդ Մարաֆի ամուսնութիւնը, ընդ Օրիորդ Գրիտինէ Մաթոսեանի :

Հարսանեկան հանդէսը զուտրնտանեկան շրջանակի մէջ տեղի ունեցաւ, յորմէ ետք Տիար Ե Տիկին Բ. Մարաֆ ուղղակի Կէզիրէ Բալասը գնացին, ուր պիտի անցնեն իրենց մեղրալուսինը :

Վերոյիշեալ երկու ծանօթ դերդաստաններուն խնամութիւնը ցնծութիւն կը պատճառէ բոլոր իրենց բարեկամաց, որոնց հետ խմբագրութիւնս եւս իր ջերմագին խնդակցութիւնը կը ներկայացնէ Մաթոսեան Ե Մարաֆ ընտանեաց :

Նմանապէս Լանկէնթալէն (Չուիցերիա) մեզ կիմացնեն հայ երիտասարդի մը, Տիար Գառնիկ Սալմասեանի ամուսնութիւնը տեղւոյն երեւելի ընտանիքներէն միոյն պատահանող Օրիորդ Էմմի Ծաֆնէրի հետ :

Տիար Գառնիկ Սալմասեան ընկի Միխայիլեցի, իր հողագործական ուսմունքը Թրանսայի մէջ կատարելագործելով այժմ իր արհեստով կ'ըբարի Հելվետիոյ մէջ :

Ձերմագին շնորհաւորութիւններ նորապսակ ամուսնուին :

ԿՈՒԻ ԵՒ ԱՐԻՒՆՅԵՂՈՒԹԻՒՆ ԷՐԶՐՈՒՄԻ ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Տր. Պէլք, Փոքր-Ասիա ուղևորող գերմանացիին, որուն արկածներն քերթերուն հետ քանի մը ամիս առաջ առիթ տուին գիւնադիտական թղթակցութեանց գերման դեսպանատան Ե դրան միջի, կը հեռագրէ « Թրանսֆորթըր Չայթունկ » ի թէ ժանր խռովութիւններ տեղի ունեցեր են Էրզրում ընդ մէջ հայ ապստամբ խումբերու Ե քերթերու :

Ըստ Տր. Պէլքի նախայարձակը հայերը եղած են, առտնք կը փախաբին եղեր Մուշի հարաւային կողմը տեղ մը երթալ առաջնորդութեամբ Սազո (*) անուն անձի մը Ե հոն թագաւորութիւն (*) մը հաստատել : Երկու կողմէն 50 հողի մեռեր են : Ձիւնուրական զօրութեան միջամտութեամբ հանդարտութիւնը վերահաստատուեր է Սազո Ե իրեններէն հինգ հողի իրենց ընկերներէն մասնուելով թակարթի մը մէջ ընկեր Ե պատնուեր են :

Տր. Պէլք կաւելցնէ թէ հայ ապստամբները ուս ղիւնուրներու հրազեններով սպառազինուած էին, Ե թէ պարտուած ապստամբներու մէկ մասը Բուսական հողը փախեր է : Գերմանացիին հեռագիրը կը վերջանայ գովասանական վկայութիւններով Էրզրումի կուսակալին համար, Ե կը ժխտէ թէ ո՛ր Ե է կատարած տեղի ունեցած ըլլայ Լուտոնի Տէյրի Գրօնիլի Պէրլիի թըղթակիցը այս տեղեկութիւնները նոյնմբեր 16 ին հաղորդելով իր թերթին կը յաւելու թէ այս հեռագրէն իր ստացած տպաւորութիւնը այն է թէ Էրզրումի կուսակալը

Տր. Պէլքին խնդրած ըլլալու է այս տեղեկութիւնները Եւրոպայ հասցնելու և անշուշտ մեծ արիւնհեղուծիւն տեղի ունեցած ըլլալու է ու թիւրք պաշտօնեաները կը ջանան գաղտնի պահել:

ԵՆՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 17 Նոյեմ. 99

ՄԵՆԵԼԻՔԸ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒԵՂՆԵՑԻՆ

Նէկիւս Նէկուսիէ Մենելիքը 1900ի ցուցահանդիսին համար Փարիզ գալէն առաջ Ս. Բեգրապուրկ պետի երթալի կ'ըսեն թէ նա միտք ունի Հապէշիտանի եկեղեցին Ռուս եկեղեցական Ս. Սինոդին հանձնարելու:

Եթէ լուրը այդ կերպով տարածուի, բնականաբար անհեթեթ պիտի լինի:

Արեւելեան զանազան եկեղեցիները, ամենքն ալ ինքնագլուխ են, այսինքն իրենցմէ դուրս գլուխ չեն ճանչնար: Մէն մի պետութիւն Ռուսաստան, Յունաստան, Սերպիա, Ռումանիա, իւր ազգային եկեղեցին ունի: Կ. Պոլսոյ, Անտիոքի, Աղեքսանդրիոյ և Երուսաղէմի զանազան ազգութեանց Պատրիարքները որք Օսմանեան կայսրութեան մէջ կը գտնուին, անկախ են և կը կազմեն նոյնքան ինքնագլուխ եկեղեցիներ:

Բոլոր այս եկեղեցիները — այժմ թուով տասն և չորս են — իրարու հետ յարաբերութեան մէջ են, այսինքն միեւնոյն վարչապետութիւն կը քարոզեն, իրենց քահանաներն կրնան ժամերգութիւն ընել մէկ կամ միւս եկեղեցւոյն մէջ, հաւատացեալները կրնան որիչ եկեղեցւոյ մը քահանային դիմել, զոր օրինակ՝ Աթէնքի Սինոդին ենթարկեալ Յոյն մը կրնայ Ս. Բեգրապուրկի Սինոդին ենթարկեալ Ռուս քահանայի մը կրօնական արարողութեան դիմել կամ Սերպ քահանայի մը — որ Գարլովիցի պատրիարքին ենթակայ է — կրօնական արարողութեան դիմել:

Օրթոտոքները կեդրոնական կամ միջազգային իշխանութիւն չեն ճանչնար, ինչպէս Պապը կաթոլիկներու վրայ կ'իշխէ, ինչ ազգի ալ որ անոնք պատկանին: Կ. Պոլսոյ պատրիարքը միայն պատուոյ առաջնութիւն մը ունի:

Եթէ ուրիմն Մենելիք կողմէ Հապէշ եկեղեցին Օրթոտոքս եկեղեցւոյն վերածնել, պէտք է որ ոչ թէ ինքզինքն ենթարկէ Ս. Բեգրապուրկի Սինոդին — որն եկեղեցականապէս անհեթեթ է — այլ իւր եկեղեցւոյն վարչապետութիւններն ենթարկէ Օրթոտոքս եկեղեցւոյն վարչապետութեանց և ընդունի զանազան Օրթոտոքս եկեղեցիներու հետ յարաբերութիւնը: Այդ այդ ձեւակերպութիւնը այնքան դիւրութեամբ կարելի չէ իրագործել: Հապէշիտանի եկեղեցին — կաթոլիկ եկեղեցւոյն նայած քով — ոչ թէ հերձուածող է այլ հերքատիկոս է: Նա հերքատիկոս է նաև Օրթոտոքս հայկազգայնի Յիւրաի նա կ'ընդունի էօթիչէսի վարդապետութիւնները, որք հակառակ կաթոլիկ և օրթոքս սրբ եկեղեցիներու վարչապետութեանց Քրիստոսի մէկ բնութիւն կուտան փոխանակ երկուքի: Մենք աստուածաբանական վիճարանութեան մը մէջ մանկ չենք ուզել, բայց Մենելիք օրթոտոքս միաբանութեան մէջ ընդունուիլ կարենալու: համար, ստիպուած պիտի լինի այդ հերքատիկոսութիւնը մէկ կողմ դնել, որն Ս. գարուն այնքան իրարանցում առաջ բերաւ յԱրեւել: Էօթիչէսեան միւս հերքատիկոս եկեղեցիներն են՝ Եգիպտոսի Խպտի եկ'ղեցին և Սուրիական եկեղեցին:

Այնքանորից խպտի պատրիարքն

— չ'չիտեմ Նոյն քաղաքի Յոյն պատրիարքին հետ — է որ Հապէշիտանի եկեղեցւոյն է կրօնական տեսակէտով:

Ինչպէս կը տեսնուի այս համառոտ և կարճ անտութեան, կրօնական խնդիրներն շատ բարդ են, և ո'րչափ ալ իւր ժողովրդեան տէրն լինի Մենելիք, ո'րչափ ալ զօրաւոր լինի Ս. Սինոդի իշխանութիւնը, կարելի չէ եկեղեցի մը ուրիշ եկեղեցւոյ մը հետ կցել այնչափ դիւրութեամբ որչափ ավերիկզան սուլթանութիւն մը կամ թար խանութիւն մը՝ կայսրութեան մը հետ:

Փարիզ, 24 Նոյեմբեր 99

ՌՈՒՐ ՊՕԼՐՆԵՐՈՒ ՄԻԱՅՈՒՄԸ

Անդրիացի պատմաբաններակին մինիսդը Պ. Ճէյմս Պրայս որ ազատական կուսակցութեան կը պատկանի, և որ շատ անուանի է իբրև լուրջ պատմաբան, անցեալ օր Ապրիլի մէջ խոսած ժամանակ կ'ըսէր թէ ազատական կուսակցութեան պարտաւորութիւնն է Անգղիոյ կառավարութեան հետ միանալ թրանսպարի պատերազմին համար: Վստահութիւն յայտնելու է թրանսպարի անգղիական հպատակ՝ հօլանտացիներու վրայ, անոնց խաղաղութիւնը գովելով: Արդ ճիշդ այն վայրկեանն որ Բէյմիլիի պատուելի բրօքէսօրը այդ խօսքերն կ'արտասանէր, լուր կը հասնէր թէ ուր որ թրանսպարեան կամ Օրանտեան բանակ կարգի բոլոր անգլիահպատակ հօլանտացիներն բոլորովին եղբայրական ընդունելութիւն մը կ'ընեն զօրաց, և ասկէ զատ կը միանան անոնց՝ զօրք գրուելով:

Կարծելու չէ թէ այդ կամաւորապէս զօրք գրուելները ազարակի գործաւորներ են, ընդհակառակը կան շատ հարուստ և պատուաւոր անձինք, նոյն իսկ երեսպետ խաններ:

Ժողովրդոց այս բարի տրամադրութիւնը շատ նպաստաւոր է երկու հասարակապետութեանց միացեալ բանակներուն, մինչ ընդհակառակը շատ անպատասանգ զիական բանակին: Ասկէ զատ անկասկածելի է թէ սահմանադրի հօլանտացի ժողովրդէ արուած օրինակը տարափոխիկ պիտի լինի, հաւանական է թէ հարաւային զաղթականներն ալ անոնց օրինակին հետեւին: Մտածելու է թէ բոլոր հօլանտացւոց թիւն է 140,000 և այս թիւը անգղիացւոցմէն շատ բարձր է: Կարելի է հաւատալ որ եթէ Անգղիայիք իրենց զօրքերն շարժան մէջ չեն դնել Ափրիկէի մէջ, պատճառն այն է որ վստահութիւն չունին պատահելիք եղբւրթեան վրայ, մանաւանդ չեն ուզեր իրենց ետեւ ասպտամբներու խումբ մը տեսնել:

Պ. ԱՐԹՈՒՆ ՊԼՔԻԱՌԵԱՆ

Հայերէն բոլոր թերթերէն առաջ կը փութանք ծանուցանել թէ Պ. Արթուն Պէքեարեան՝ բնիկ Թէքլիմազդի, նախկին սչակերտ Կ. Պոլսոյ Սուլթանիչէ վարժարանին, փերջին օրերս չըլանաւարա եղաւ Ֆրանսայի միակ ծովային բարձրագոյն ճարտարամտական վարժարանէն (Génie Maritime) ակադէմիքի պատիւ երիտասարդին էնժընըր որ Փարիզի (Ecole Centrale) Նախկին սչակ'րտ ալ եղած է, ինքն մէկ հատիկ և առաջին հայն է որ այդ բարձրագոյն վարժարանէն — որն դարձեալ Ֆրանսայի մէջ մէկ հատիկ է — չըլանաւարտ կ'ելլէ:

Պ. Արթուն Պէքեարեան մեր այսօրուան առաջնակարգ և գիտնական էնժընըրներէն մին է, բոլոր մեր բարեմաղթութիւնները իւր սուղաւային համար:

A. S. ԵՒ Մ. Ս. ԳԱԼԻԹՐԱԿԻ

Թ Ո Ք Ա Խ Տ

4. Թոմային խցիկ (Pneumatic Cabinet): Ասիկայ գործի մ'է՝ որոյ միջոցաւ կը կարծուի թէ կարելի կը լինի բանալ թոքերու այն օդային անօթները՝ որ մասամբ կամ բոլորովին գոցուած են թոքահիւժախտէ յառաջ եկած խոցերով:

Տր. Հարրիս կըսէ թէ՝ «երբ կուրծքն արկարացած է անգործունէութեամբ՝ վարակեալն այդ վիճակին մէջ թոքերու ընդլայնման համար չունի պէտք եղած մկանական գործութիւնն, ուստի պէտք է դիմել մեքենական միջոցներու՝ բաղձացեալ նըպատակին հասնելու համար եւ այս միջոցն կրնանք ստանալ թոքային խցիկով:»

Սցիկն նախապէս կը պատրաստուի հիւանդին վիճակին յարմար չնչելի դեղերով: Կիւանդն կը մտնէ խցիկին մէջ՝ ուր ինքն ազատ է արտաքին ճնշումէն եւ կ'սկսի մասնաւոր խոզովակներու միջոցաւ շնչել խցիկին մէջ դանտուած օդն՝ ուր պատրաստուած է իրեն համար: Այս կերպով թոքերն տակաւ կընդլայնին եւ խոցերով գոցուած մասերն ալ կը բացուին որով շնչատութիւնն կ'սկսի եթէ ոչ բոլորովին դէթ մասամբ դիւրանալ եւ կանոնաւորիլ:

Տր. Հարրիս կը յայտնէ թէ իւր կատարած փորձերէն ստացած է հետեւեալ արդիւնքն:

Հիւանդներու խումբ	Իւր	Տարի	Բարեմում	Բուժում	Մահ	
Գինային թօք.	28	18—38	18	1	9	
Հարբան.	»	26	19—41	17	6	3
Գրուն. ցնցղատ.	15	12—52	8	6	1	
Շնչարգելութիւն.	4	36—57	1	2	—	
			73	44	16	13

5. Կանխարգել միջոցներ. — Այս նպատակին համար Եւրոպայի եւ Ամերիկայի այլեւայլ քաղաքներու մէջ արդէն շատ խոհեմութեամբ բացուած են անողջապահանոցներ, մասնաւորապէս թոքահիւժախտաւորներու համար: Այս հաստատութեանց եւ միջոցներու համար էր՝ որ Տր. Լանտուզի հետեւեալ կերպով խօսեցաւ անցեալ Մայիսին ի Պէռլին գումարուած հակաթոքահիւժախտի բժշկական համաժողովին մէջ: «Որքան ժողովրդային անողջապահանոցներու թիւերը շատցուին այնքան ալ հիւանդանոցները պիտի գոցուին մասնաւոր ապագայի մը մէջ. վանդի կանխարգել միջոցներով եւ դարմանումով որ պիտի գործադրուին անշուշտ չենքերու մէջ՝ շատ պիտի նուազին վարակման միջոցները. քանզի հիւժախտաւորները բուժուելու համար անողջապահանոցները մտնելով՝ ալ հիւանդանոցներուն չպիտի հայթայթեն հիւժախտաւորներ որոնք յաճախ կը մտնեն:»

Լանտուզի թոքահիւժախտաւորներու հիւանդա՝ ոյլ անօրինութիւնը իր խնամոց յանձնած հիւանդներուն հետեւեալ յանձնարարութիւնները կընէ ասիկալ թերթիկներու միջոցաւ:

1. — Երբէ՛ք չ'թքնել փողոցները, տախտակամաններու վրայ կամ ծիւղերովներու մէջ. բայց միայն հակահիւժախտաւոր պարունակող մասնաւոր ամաններու մէջ:
2. — Տան մէջ ֆարպոլուս սը սիւսի գորաւոր բաղադրութիւն մը (պպուրի դղալ մը) կամ ուրիշ հակահիւժախտաւոր պարունակող թիթեւ թքամաններ ունենալ, զայն ամեն օր ճեմիչին ծակէն վար թափել: Երբէ՛ք ներելի չէ աղբանոցը թափել:
3. — Թափելէ վերջ եռացած ջրով լաւ մը լուալ ու ասպուրի դղալ մը հակահիւժախտաւոր դնել:
4. — Հիւանդին թաշկինակը յաճախ փոխելու է գոնէ օրը մի անգամ, եւ լուանալէ առաջ լաւ մը եփելու է:
5. — Հիւանդու թիւնը ամբողջ մարմնոյն մէջ շտարածելու համար երբէ՛ք թուրք չ'կրնել:
6. — Հիւանդին սենեակը մաքուր պահուելու է եւ օրը շատ անգամ փոխելու է:
7. — Թոքահիւժախտաւորները պարտին իրենց անկողնի մեկուսացնել:
8. — Թոքահիւժախտաւորէ բնակուած սենեակի մէջ բնակելէ առաջ հակահիւժախտաւոր ամեն միջոցներով պէտք է զտել լաւ մը մաքրել:
9. — Կաթը շատ անգամ փոխանցիկութեան միջոց լինելուն, պէտք է լաւ մը եռացնել:

Գաղղիոյ ազգային Բժշկական-գիտական ժողովն եւս մասնաւոր օրէնքներ առաջարկած է թոքահիւժախտի ծաւալումը արգելելու համար եւ Հապարակաց իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ որպէսզի հակահիւժախտաւոր պարունակող թքամաններ դնեն գաղղիներու եւ հասարակաց վայրերու մէջ:

ՏՐ. ՅԱԿՈՒԲԱՆ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 3 Դեկտեմբեր 1899

Ա. թիվ	4347	չահած է	Ֆրանք	1000
Բ.	3264	"	"	200
Գ.	4037	"	"	100
Դ.	3669	"	"	50
Ե.	3328	"	"	50

Հետևապես 25 ական ֆրանք կը շահին

404	5035	2456	4192	5467	1610
7610	3807	7776	9168	8672	1539
316	5524	119	7566	6483	698
2430	2150	6720	7904		

ՄԱՆՈՒՔ. — Այն շահող թիվերը որոց վերահայտարարներն ութը օրէն չեն գտնուիր, ընկերութեան անուակին չեփարկան թիվերը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ
ԶԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱՌԵՏԱՐ. ՎԱՐՃԱՐԱՆԻՆ ՄԷՋ
Ի ԶԱՎՈՒՏԻՅԷ

Դարաւանդութիւնը բեկաբեկ են նոյն մը պէս 6 էն սկսեալ՝ երեկոյները ժամը 7 էն մինչև 9-1/2 և կ'աւանդուին Անգլ. Գաղղ. Արարներէն և Հայերէն դասեր:

ՎԿԱՅԵԱԼ ԱՂԲՅՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԴԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆԻ ԶՐԻ ԵՆ

Գիմեր առ Մ. Յ. ԳնԱճԱՆ Հիմնադիր Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Օրձգի Պալ վանառասան մօտերը, Կամե-է-Պենարի ցիւց դիմացը

ԵԿԱԻՅԵ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս էրենց նոր բացած փուռին մէջ, անխաղախ աւելի կը պատրաստուի ԳԱՂԳԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հայեր Սոգրէի, թէյի և կաթի պարսիմաններ, և այլն:

Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտեամբ և փութով կը կատարուին 11-50

ԱՌԵՏԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՇՈՒՊՐԱ — ԿԱՍՈՒՐՁԻՆ ԴԻՄԱՑ — ՇՈՒՊՐԱ
Չառաչող Սօզաղը

Յրանսական և ուսական ընտիր ապրանքներուն ամենէն տոկոճները կը գործածէ միշտ:

Արտեստին մէջ ունեցած հմտութիւնը ամեն տարակոյտէ վեր է:

Իրեն պատրաստած ճաշակաւոր ու ձեւաւոր կօշիկները բոլոր յաճախորդաց գոհունակութեան են արժանացած:

Ձեւաւոր և տոկոճ կօշիկներ ունենալու փափաքողը՝ երբ առաջին անգամ հոն գիմէ, շատ գոհ պիտի մնայ և անպատճառ մնայուն յաճախորդ պիտի արձանագրէ ինքզինքը 4-50

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ

ՊՕՆՕԿՐԱՑ

ԴԱՆՎՈՒՄ. — Մուսի փողոց. — ԴԱՆՎՈՒՄ:
Ս. Ե. Ս. Սեմալիի վանառասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և ջօնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար գնազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ և քիֆի:

Յրանսական և ամերիկեան ապրանք ամենաբարձր տեսակներէն զարդեղներ, օդրաներ, օդեր, մասանքներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

87-50

ՏՕՐՕՐ ԺՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՏՄԱՐՈՅԺ
Ապրիլ, Շաբէ Բուպրի, բիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեզձ ախաւանք:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ախաւանի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լիցուցած ախաւաններուն տոկոճուութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխստարէ: 4 6-10

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ
Վկայեալ ճեղական կառավարութեան և բժշկական վարժարանի:

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապտիլ-Ագիզ, Այի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը և տեղական կրթութի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն գիմողները կատարելապէս գոհ պիտի մնան 24-24

ԱՍՏԻԿ ԷՍՄԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՀԱՅ ԲԻՒՐԳՅԻ ԱՐՇԵՍԱՒՈՐԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

ԳԱՊԱԼ-ԽԱԼԻՔ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն գիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և ըն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ:

7-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՔ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մադի ներկ (բաստըզ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխստարեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 10 յրջող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ շուրէն կը գտնուի նաև Աղէք-սանդրիա Միքէլ-Կէտիս մանրավաճառ Պ. Լեոն Ասլանեանի մօտ:

Ախաւանի փոշի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ սակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր սղգաց գործածած նամակագրուիները: 4 1-8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՆՎՈՒՄԷ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Երաբերականներ, Մահազդեր, Հրախաղեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուցոյցներ, Կանոնագրեր, Տոմար, Ընկերութեանց և վաճառականներու սպագրական ամեն պիտոյքներ:

Իւր սպարանին մէջ եկած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին: